

Ե .

Ժամ ժամ գիմ դարիպուրիւնս ես յիշեմ ու նստիմ ու լամ.
 Ճապղել եմ ջըրիդ նըման, ես օտար երկիր կու գընամ.
 Աստուած գիտէ ան ճամփան ուր երթամ կամ ուր տի մընամ:
 Ո՞վ կապէ խաչն իմ սիրտիս, կամ հողվարք որ ես դուրանամ:
 Յորեկն եմ նետիդ նըման, ուր նետեն ես ի հոն կենամ.
 Գիշերն՝ աղեղան նըման, ես լարթափ ի վար կու գընամ:

Զ .

Սրտիկս է եղեր դալամ, բաժնելու թղթեր կու գըրէ:
 Կանչեմ, ո՛հ իմ տէր Աստուած, զամեայն դարիպ դու պահէ՛.
 Ղարիպ գընացած ունիմ, իմ տարտերս ըգիս կու լափէ:
 Շալլա թէ շուտով դառնայ, թէ չէ իմ հոգիս կ'ելանէ:

Է .

Եկին ու ասին ընծի թէ եարիդ պաղչան կայ գոհար.
 Ելայ գընացի, եղբա՛րք, չիգըտայ ես հատ մի ճոհար.
 Ընկայ ի ծովուն միջին դարդ եղայ ու կ'երթամ ի վար.
 Մանկտի՛ք, ձեր արե՛ն ասեմ, ցըցուցէք ինձ ելնելու ճար:
 -Ասե՛մ քեզ ելնելու ճար. մի՛ երթար դու երկիր օտար.
 Կ'երթաս դու երկիր օտար, փոշըմիս ու բանդ է դիժար:

Ը .

«Գընամ ու գընամ» կ'ասեմ, հ'ոգեկ, դու դեռ աստալ չունիս.
 Պաշրիկս ես եփոց դըրի, դեռ աւօտ չաւօտ կու նայիս:

Թ .

Չիմ եարն էմանէթ կուտամ, ի վարդին մէջըն պահեցէք.
 Թ'երթամ ու շուտով դառնամ, զամանաթս ի տէրն հասուցէք.
 Թ'երթամ խարպուկ մեռնիմ, վարդըն ձեզ՝ ըզտերն յիշեցէք:

Ժ .

Մարդն որ խարիպուրիւն, գեմ նորա շատ խելք պիտենայ.
 Քան զամենըն ցած կենայ, հապա թ'իւր բանըն կու լենայ.
 Մըտիկ դու ծառին արա՛ թէ քանի՛ հիւնէր կայ ի նա,
 Այն ճիւղն որ զպըտուղն ունի, քան զդարտակն Է՞ր ցած ու կանայ: